

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/12

21 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լիանա Բայանի 29.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 22.09.2014 թ-ի թիվ 1323 որոշման դեմ:

Ա/Ձ Լիանա Բայանի գանգատում բերված փաստարկները.

26.09.2014 թ-ին Ա/Ձ Լիանա Բայանը (այսուհետ նաև գանգատաբեր) Նոր Նորքի ՀՏ-ից ստացել է թիվ 1323 որոշումը, որի համաձայն 19.09.2014 թ-ի դրությամբ իր չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 170.225 դրամ, որից պարտադիր սոցիալական ապահովության վճար 170.225 դրամ /2011 թ-ի մարտից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների նվազագույն սոցիալական ապահովության վճար/, որը ենթակա է գանձման:

Գանգատաբերը հայտնում է, որ նախ որոշման մեջ իր հարկ վճարողի հաշվառման համարը գրված է սխալ՝ ՀՎՀՀ-ն նշված է 25316724, սակայն գանգատաբերի ՀՎՀՀ-ն է 25212849:

Ըստ գանգատի, Լիանա Բայանը որպես անհատ ձեռնարկատեր գրանցվել է պետական ռեգիստրի Նոր Նորքի տարածքային բաժնում և 25.03.2011 թ-ին հաշվառվել է Նոր Նորքի հարկային տեսչությունում: Զբաղվում է փաստաբանական գործունեությամբ, բարեխիղճ հարկ վճարող է՝ սահմանված ժամկետներում ներկայացրել է հաշվետվությունները և վճարել դրանցով արտացոլված պարտավորությունները:

Գանգատաբերը հայտնում է նաև, որ «Պրոկրեդիտ բանկ»-ում ունի հաշվեհամար, որի միջոցով մշտապես վճարել է հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-72-րդ հոդվածների դրույթներով, գանգատաբերը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 22.09.2014 թ-ի թիվ 1323 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Լիանա Բայանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 22.09.2014 թ-ին ընդունել է թիվ 1323 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 19.09.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Լիանա Բայանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 170.225 դրամ: Նշված պարտավորությունը պարտադիր սոցիալական

ապահովության վճարի գծով է, որը առաջացել է 2011 թ-ի մարտից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Լիանա Բայանի անվամբ պետական ռեգիստրի կողմից, ըստ էության, գրանցվել է երկու անհատ ձեռնարկատեր: Մասնավորապես, մեկը գրանցվել է 25.03.2011 թ-ին, պետական գրանցման համար թիվ 282.20020, ՀՎՀՀ 25212849: Մյուսը նույնպես գրանցվել է 25.03.2011 թ-ին, պետական գրանցման համար թիվ 282.20016, ՀՎՀՀ 25316724: Սակայն իրականում նշված անհատ ձեռնարկատերերը հանդիսանում է նույն ֆիզիկական անձը: Դրա մասին է վկայում այն փաստը, որ նշված անհատ ձեռնարկատերերի անձնագրային և սոցիալական քարտի տվյալները, ինչպես նաև բնակության հասցեները նույնն են:

Քննարկվող դեպքում Որոշումը կայացվել է ըստ էության գոյություն չունեցող Ա/Ձ Լիանա Բայանի նկատմամբ, որի տվյալներն են՝ պետական գրանցման համար թիվ 282.20016, ՀՎՀՀ 25316724: Վերջինս գործունեությունը պետական ռեգիստրի կողմից դադարեցվել է, սակայն այդ մասին հարկային մարմնին տեղյակ չի պահվել:

Ինչ վերաբերվում է Ա/Ձ Լիանա Բայանին, որի տվյալներն են՝ պետական գրանցման համար թիվ 282.20020, ՀՎՀՀ 25212849, ապա հարկ է նշել, որ վերջինս 2011 թ-ի մարտից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով չկատարված պարտավորություններ չունի:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 22.09.2014 թ-ի թիվ 1323 որոշումը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ